ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 28.09.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/29

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.08.2017թ. թիվ 03/26-3/14667-17 գրությամբ «Փինկ Ֆլամինգո Գ և Ա կենտրոն» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով (այսուհետ՝ նաև պաշտոնական ընթացակարգ) ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Նորք ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 07.08.2017թ. թիվ 99 գրության հիման վրա, 10.08.2017թ. թիվ 03/26-3/14667-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Փինկ Ֆլամինգո Գ և Ա կենտրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ:

2. **<u>«Նորք ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Նորք ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ն 07.08.2017թ. թիվ 99 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Նորք ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման համար կազմակեպված «ՆԻԿՀ-ԳՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած «Փինկ Ֆլամինգո Գ և Ա կենտրոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանել հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

Ուստի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն կից ներկայացնում եմ անհրաժեշտ փաստաթղթերը»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին «Նորք ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ի տնօրենի վարչատնտեսական հարցերով տեղակալ Ա. Բադալովը և բժիշկ-լաբորանտ Աննա Ղազարյանը:

3. <u>«Փինկ Ֆլամինգո Գ և Ա կենտրոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Փինկ Ֆլամինգո Գ և Ա կենտրոն» ՍՊԸ-ն Խորհրդին ուղղված 18.08.2017թ. թիվ 13/17 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ուղարկված՝ մեր կազմած մրցույթային փաստաթղթերի պատճեններում մեր կողմից ներկայացված՝ արտադրողի կողմից տրամադրված ապրանքի նկարագրի բնօրինակի պատճենը (բրոշյուրը անգլերենով) փոխված է բողոքարկողի կողմից մեկ այլ ապրանքի նկարագրով՝ անգլերեն լեզվով, որպես մեր կողմից ներկայացված ապրանքի բրոշյուր: Փոխված նկարագրով ապրանքը նույնպես փորձանոթ է, բայց ընդհանրապես չի բավարարում մրցույթում պահանջվող ապրանքի պահանջներին, և հնարավոր է, որ այս փոխված նկարագիրն է հիմք հանդիսացել, որ մեր հայտը մերժվի:

Այդ նկարագիրը կազմվել է համացանցի կամ գուցե այլ հատուկ ծրագրի օգնությամբ: Նկարագրության ներքևում կա նշում. «Best Regards, Hripsime Navasardyan»: Ըստ երևույթի,

նշված անձն ունի որևէ կապ այս փոփոխության հետ: Խնդրում եմ, որ բողոքարկման հանձնաժողովը տա իր գնահատականը այս փաստի վերաբերյալ:

Մրցութի տեխնիկական բնութագիրը հետևյալն է՝ «Վակումային փորձանոթ K3 EDTA (3 մլ կամ ավելի) պտուտակ. կափարիչով, պրեմիում դասի (ֆորմատ՝ 50 հատ/տուփ)»:

Մեր կողմից ներկայացված ապրանքը հանդիսանում է «Վակումային փորձանոթ K3 EDTA (3 մլ)»: Փորձանոթը փակված է միջազգային ստանդարտներին համապատասխան, վակումը և փորձանոթի մեջ լցված հեղուկն ապահով պահպանող, ինչպես նաև փորձանոթը բացելիս անձնակազմի անվտանգությունը ապահովող համապատասխան կափարիչով: Ունի որակի միջազգային CE, ISO 13485:2003 սերտիֆիկատներ:

Այսպիսով, մեր կողմից առաջարկված ապրանքը բավարարում է պահանջվող ապրանքի հիմնական պահանջին:

Մեր մեկնաբանությունը մրցույթի տեխնիկական բնութագրի վերջնամասի վերաբերյալ. «Պտուտակ. կափարիչով, պրեմիում դասի (ֆորմատ՝ 50 հատ/տուփ)»:

Մրցութի հայտարարության ապրանքի տեխնիկական բնութագրում գրված է «Վակումային փորձանոթ K3 EDTA (3 մլ կամ ավելի) պտուտակ.» և դրված է միջակետ: Միջակետից հետո գրված է «կափարիչով»: Այս ձևակերպումից հասկացվում է, որ «պտուտակ» և «կափարիչով» առանձին էլեմենտներ են: Այս չափորոշիչը հստակ ձևակերպված չէ: Ըստ մեր մեկնաբանության գոյություն չունի նման վակումային փորձանոթ, որը ունենա առանձին «պտուտակ» և առանձին «կափարիչով» էլեմենտները:

«Պրեմիում դասի» չափորոշիչի մեր մեկնաբանությունը. «Պրեմիում դաս»-ը գովազդային տերմին է: Ապրանքի որակի իրական գնահատականը միջազգային կազմակերպությունների կողմից տրված որակի ISO13485:2003 և CE սերտիֆիկատներն են, որոնք հավաստում են, որ նշված ապրանքը հանդիսանում է «բժշկական նշանակության ապրանք» և համապատասխանում է նշված ապրանքի վերաբերյալ միջազգային բոլոր պահանջներին: Այս սերտիֆիկատները մեր կողմից առաջարկված ապրանքն ունի:

«ֆորմատ 50» չափորոշիչի մեր մեկնաբանությունը. Կարևորն այն է, որ յուրաքանչյուր փորձանոթի վրա գրված լինի ապրանքի արտադրման ժամկետը և “lot Number”, և ապրանքը մատակարարման պահին ունենա ընդհանուր պիտանելության ժամկետի 2/3-ից մեծ մնացորդային պիտանելության ժամկետ, որպեսզի բացառի պիտանելության ժամկետի ավարտին մոտ և ժամկետանց ապրանքների մատակարարումը: Մեր կողմից

առաջարկված ապրանքը այս չափորոշիչն ևս բավարարում է, չնայած այս չափորոշիչը բացակայում է մրցույթի տեխնիկական բնութագրում»:

Խորհրդում տեղի ունեցած նիստին մասնակցում էր Ընկերության տնօրեն Մելս Բաղդասարյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2017/29 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 10.08.2017թ. թիվ 03/26-3/14667-17 գրությունը և կից փաստաթղթերը, «Նորք ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ի 07.08.2017թ. թիվ 99 գրությունը, «ՆԻԿՀ-ԳՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև հրավեր), «ՆԻԿՀ-ԳՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 18.07.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 2, 26.07.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի N 3, 28.07.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի N 4, 31.07.2017թ. ժամը 14:00-ին կայացած նիստի N 5 արձանագրությունները, «Փինկ Ֆլամինգո Գ և Ա կենտրոն» ՍՊԸ-ի կողմից «ՆԻԿՀ-ԳՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտի պատճենը, Ընկերության 07.08.2017թ. թիվ 99 գրությունը.

«Նորք ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ՆԻԿՀ-ԳՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (այսուհետ՝ նաև ընթացակարգ) 1-ին չափաբաժնին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Փինկ Ֆլամինգո Գ և Ա կենտրոն» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 4 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ «ՆԻԿՀ-ԳՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրի պահանջներին:

Հանձնաժողովը 18.07.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 2 արձանագրության 4-րդ կետով Ընկերությանը ճանաչել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից:

Նույն արձանագրության 6-րդ կետով Հանձնաժողովը որոշել է ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ Հրավերի 2-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Ընկերությունը 24.07.2017թ. ընթացակարգին ներկայացված հայտի N 6 հավելվածով՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագիրը՝ «Վակումային փորձանոթ K3 EDTA (3 մլ) (ֆորմատ՝ 1800)»:

Հանձնաժողովը՝

- 26.07.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի N 3 արձանագրության 2-րդ կետով արձանագրել է, որ «Փինկ Ֆլամինգո Գ և Ա կենտրոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորումը հիմնավորող փաստաթղթերում ներառված 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական պահանջներին և որոշում է ընդունել մերժել «Փինկ Ֆլամինգո Գ և Ա կենտրոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:
- 28.07.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի N 4 արձանագրության 2-րդ կետով որոշում է ընդունել Հանձնաժողովի N 3 նիստի արձանագրության մեջ կատարել համապատասխան շտկումներ, մասնավորապես, շտկել 1-ին և 2-րդ որոշումները, և ծանուցել «Փինկ Ֆլամինգո Գ և Ա կենտրոն» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել տեխնիկական բնութագրում արձանագրված անհամապատասխանությունները:
- 31.07.2017թ. ժամը 14:00-ին կայացած նիստի N 5 արձանագրությամբ արձանագրել է, որ սահմանված ժամկետում «Փինկ Ֆլամինգո Գ և Ա կենտրոն» ՍՊԸ-ի կողմից չեն ներկայացվել շտկված փաստթղթերը և որոշում է ընդունել մերժել Ընկերության հայտը:

Խորհրդում 12.09.2017թ. կայացած նիստի ժամանակ «Փինկ Ֆլամինգո Գ և Ա կենտրոն» ՍՊԸ-ի տնօրենը հայտնեց, որ ընթացակարգի հրավերով սահմանված՝ գնման առարկայի տեխնիկան բնութագրով սահմանված պահանջը՝ «Վակումային փորձանոթ K3 EDTA (3 մլ կամ ավելի) պտուտակ. կափարիչով, պրեմիում դասի (ֆորմատ՝ 50 հատ/տուփ)», վերջինիս մոտ ի սկզբանե տարաբնույթ մեկնաբանություն է առաջացրել:

Մասնավորապես, տեխնիկական բնութագրի սահմանման մեջ պարունակվող՝ «պտուտակ. կափարիչով, պրեմիում դասի (ֆորմատ՝ 50 հատ/տուփ)» գրառման «պտուտակ» և «կափարիչով» հասկացությունները՝ դրանց միջև առկա միջակետի պատճառով Ընկերության կողմից մեկնաբանվել են որպես պահանջվող փորձանոթի առանձին տարրեր: Նշված հանգամանքն էլ, Ընկերության տնօրենի հավաստմամբ, տեխնիկական բնութագրի անհամապատասխանության թյուրըմբռնման պատճառ է հանդիսացել, ինչի արդյունքում շտկում չի կատարվել:

Ընկերության տնօրենը նշեց նաև, որ Հանձնաժողովի կողմից չի նշվել արձանագրված անհամապատասխանությունների մանրամասն նկարագրությունն, այսինքն, Հանձնաժողովն արձանագրել է անհամապատասխանություն՝ առանց որևէ հստակեցման, թե ինչն է հանդիսանում դրա հիմքը, և «Փինկ Ֆլամինգո Գ և Ա կենտրոն» ՍՊԸ-ին տվել է արձանագրված անհամապատասխանությունները շտկելու հնարավորություն:

Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ Հանձնաժողովի համար Ընկերության հայտը մերժելու հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ Ընկերության հայտում բացակայում է առաջարկվող ապրանքի՝ փորձանոթի՝ անձնակազմի անվտանգությունը ապահովող համապատասխան պտուտակաձև կափարիչի առկայությունը հավաստող նշումը, ինչը, ըստ Պատվիրատուի ներկայացուցչի, ընդունելի չէ, և ենթակա է մերժման:

Միաժամանակ, Պատվիրատուի ներկայացուցիչը նշեց, որ Հանձնաժողովի քարտուղարի կողմից Ընկերության տնօրենին քանիցս տրվել են վերջինիս տեխնիկական բնութագրում արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ բանավոր պարզաբանումներ:

Ինչ վերաբերում է պահանջվող ապրանքի վրա «Պրեմիում դաս» մակնշմանը, ապա, պատվիրատուի ներկայացուցչի հավաստմամբ, վերջինիս առկայությունը պատվիրատուի համար սկզբունքային նշանակություն չի ունեցել, և դրա բացակայությունը Ընկերության հայտը մերժելու պատճառ չի հանդիսացել:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն

զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

• 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին:

• 46-րդ կետի համաձայն՝ ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

• 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ»» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

• 52-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Հրավերի 8.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ նույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերն ու առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 8.13-ից 8.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Հրավերի 8.17 կետի համաձայն՝ նույն հրավերի 1-ին մասի 8.13 կետի 4-րդ ենթակետով նախատեսված՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերն ուղարկելու ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի համապատասխանությունը նույն հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ պարտադիր և մանրամասն նկարագրվում են ապրանի ամբողջական նկարագրում սույն հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները:

Հրավերի 8.20 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված, ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի և (կամ) ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները, ներառյալ ապրանքի ամբողջական նկարագրի վերաբերյալ:

Հրավերի 8.21 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայ-

մաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանել Ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի պահանջներին, մասնավորապես՝ համապատասխան պտուտակաձև կափարիչի առկայության պահանջին:

Միաժամանակ, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ մերժելով Ընկերության հայտը, խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 46-րդ և Հրավերի 8.17 կետերով սահմանված պահանջները, քանի որ վերջինիս կողմից չի նշվել Ընկերության հայտով ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրում արձանագրված անհամապատասխանության մանրամասն նկարագրությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Փինկ Ֆլամինգո Գ և Ա կենտրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 10.08.2017թ. թիվ 03/26-3/14667-17 գրությամբ «Փինկ Ֆլամինգո Գ և Ա կենտրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ